



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Քաղ. Երևան

2 փետրվարի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 1
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Թունյանի

Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի

Ա. Պետրոսյանի

Քննության առնելով Լիլիթ Մուսեյանի անհատական դիմումի ընդունելիության
հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Լիլիթ Մուսեյանը /ներկայացուցիչներ՝ Արտակ Զեյնալյան, Արաքս Կիրակոսյան/ 2016 թվականի հունվարի 15-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին, 3-րդ, 61-րդ և 63-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասը՝ «ի հայտ գալուց հետո» բառակապակցության մասով:

Սույն անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը ցույց տվեց.

1.Դիմողը գտնում է, որ իր համար բացասական իրավական հետևանքներ են առաջացրել թիվ ՎԴ/10004/05/13 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2015թ. որոշմամբ կիրառված և դրանում անմիջականորեն վկայակոչված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասը:

Դիմողը կարծում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասը հակասում է ՀՀ Սահմանադրության 3-րդ, 61-րդ, 63-րդ հոդվածներին, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ, 13-րդ հոդվածներին, քանի որ խոչընդոտում է անձի դատավարական իրավունքների իրացմանը, ինչպես նաև խախտում է արդարադատության մատչելիության և հասանելիության սկզբունքները:

Ըստ դիմողի՝ սահմանադրական դատարանի եզրակացությունները և որոշումներն օբյեկտիվորեն հանրությանը հասանելի են դառնում պաշտոնական հրապարակումից հետո, հետևաբար՝ անձը սահմանադրական դատարանի որոշմանը ծանոթանալու, վերանայման դիմում ներկայացնելու համար պետք է ունենա ողջամիտ ժամկետ՝ սկսած այն պահից, երբ փաստացի հնարավորություն է ունեցել սահմանադրական դատարանի որոշումը ձեռք բերելու և սահմանադրական դատարանի որոշմամբ ղեկավարվելու համար:

2. Լիլիթ Մուսեյանի անհատական դիմումի և դրան կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ առկա չեն դիմումի քննության ընդունումը մերժելու հիմքեր, քանի որ՝

- դիմումում առաջադրված հարցը ենթակա է սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «Լիլիթ Մուսեյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասի՝ «ի հայտ գալուց հետո» բառակապակցության մասով, ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

2 փետրվարի 2016 թվականի
ՄԴԴԿՈ/1-3